ԵՐԿԻՐ՝ ԽԱՎԱՐԻ ՄԵՋ

Օսմանյան կայսրությունում հայ քրիստոնյաների կոտորածների մասին զեկուցագրերը հանգեցրին 125 տարի առաջ «Արևելքում քրիստոնեական օգնության միության» հիմնադրմանը: Այսօր կազմակերպությունն օգնում է հաղթահարել Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետևանքները: Կրկին այն գործ ունի մի ժողովրդի հետ, որը պայքարում է իր գոյության համար:

Ջոնաթան Շթայներտ

Անցած տարվա աշնան վեց շաբաթները՝ պատերազմը Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում, Հայաստանը դարձրին մեկ ուրիշ երկիր: Ադրբեջանի դեմ հայ զինվորները կռվում էին մի տարածքի համար, որտեղ գրեթե բացառապես հայեր են ապրում, որն իրեն ըմբռնում է որպես անկախ հանրապետություն, բայց որը պահանջում է Ադրբեջանը: Հայերը միայն պատերազմն ու տարածքը տանուլ չեն տվել: Պատերազմն արթնացրել է էկզիստենցիալ վախեր և ժողովրդին գցել ճգնաժամի մեջ: Սկզբնապես երկիրը էյֆորիայով և համոզված ցույց էր տալիս, որ կարող է հակահարված տալ հարձակվողին և պաշտպանել Լեռնային Ղարաբաղը: Հիասթափությունը սեփական կառավարության գրավիչ քարոզչությունից, հողերի և մարդկանց կորստից, հրադադարի համաձայնագրից, որը շատ հայեր համարում են դավաճանություն սեփական երկրի նկատմամբ, ավելի մեծ է:

Այսուամենայնիվ, սա միայն տանուլ տված պատերազմ չէ. «Տիրում է մեծ անվստահություն, չկա որևէ հեռանկար, ոչ ոք չգիտի, թե հետո ինչ կլինի մեր երկրում», - ասում է Պարույր Ջամբազյանը, որը ղեկավարում է “Diaconia Charitable Fund” բարեգործական կազմակերպությունը: Մայրաքաղաք Երևանում ցույց են անում երկու ճամբարներ: Մեկը պահանջում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, մյուսը՝ աջակցում է նրան: 2018 թ. նա, որպես «Թավշյա հեղափոխության» առաջնորդ, երաշխավորում էր ժողովրդավարական բեկում, կոռումպացված հին կադրերի «վախճան», որոնց նրա որոշ հակառակորդներ այժմ ցանկանում են կրկին տեսնել վերևում: Բայց հայերի մեծամասնությունը, ասում է Ջամբազյանը, իրավամբ, բոլորովին չգիտի, թե ում կարող է, ընդհանրապես, վստահել, քանի որ նոր կառավարությունը նույնպես կասկածվում է բնակչությանը ստելու մեջ:

Թվում է՝ է՛լ ավելի է խորանում սեփական խոցելիության փորձը՝ որպես հին քրիստոնյա ազգ թշնամիների կողմից սպառնալիքի ենթարկվելու և ընկերների կողմից մենակ մնալու զգացումը: Առաջին համաշխարհայի պատերազմի ժամանակ ցեղասպանության և դրանից դեռ առաջ Օսմանյան կայսրությունում հայերի հետ տեղի ունեցած ջարդերի հավաքական հիշողությունը վերադառնում է: «Human Rights Watch»-ի պես իրավապաշտպան կազմակերպությունները մեղադրում են Ադրբեջանին ռազմական հանցագործության մեջ: Կան հայ զինվորների նկատմամբ դաժան վերաբերմունքի, գլխատումների և նպատակային մահապատժների մասին զեկուցագրեր ու տեսանյութեր: Չնայած հրադադարին՝ հայերը մտահոգվում են՝ կապված նոր էսկալացիայի և էթնիկական զտումների հետ:

«Խոսքը մեր ազգի գոյատևման մասին է», - ասում է Ջամբազյանը: Պատերազմի ընթացքում իր կազմակերպությամբ նա անհրաժեշտ շտապօգնություն է ցույց տվել փախստականներին, հատկապես՝ կանանց, երեխաներին և ծերերին (ապաստան, հագուստ, ծածկոցներ, սնունդ, խնամքի պարագաներ): Նաև նրա անկախ եկեղեցական համայնքն ընդունել է պատերազմի գոտուց փախածներին. ժամերգության սենյակում ձգվում էին պարաններ՝ դրանց վրա ծածկոցներ կախելու և, այդպիսով, մի կերպ անձնական սահմաններն անջատելու համար:

Օգնողները եփել են ծխական տան խոհանոցում և ուտելու ժամեր պատրաստել: Կորոնայի վարակի թվերը պայթեցին, քանի որ ռմբակոծության տակ ապաստարաններում, արտակարգ պատսպարաններում օգնողների մոտ չեն կարող պահպանվել ո՛չ հեռավորություն, ո՛չ հիգիենայի կանոններ, հաղորդում է նա: Բայց համաճարակն ամենափոքր խնդիրն է:

Այժմ նրա կազմակերպության խնդիրն է աջակցել այն ընտանիքներին, որոնց ամուսիններն ու որդիները մահացել են գերության մեջ կամ որպես վիրավոր են վերադարձել: «Ոմանք կորցրել են ձեռքերը կամ ոտքերը, ոմանք էլ կուրացել են», - ասում է Ջամբազյանը և լրացնում. «Ի միջի այլոց՝ շատ երիտասարդներ: Նրանք ցմահ հաշմանդամ են»: Այդ պատճառով «Diaconia»-ն այժմ նախագծեր է մշակում՝ օգնելու այս մարդկանց՝ գտնելու իմաստավորված աշխատանք և կարողանալու ինքնուրույն ապրել: Տրավմայի ենթարկվածների հոգեբանական ուղեկցությունը նույնպես դեր է խաղում: «Մենք պատերազմ չենք ցանկացել», - ասում է Ջամբազյանը: «Երիտասարդ սերունդն այդպես չի մեծացել: Նրանք մարտի ուղարկվեցին պաղպաղականոցի կողմից: Դա մի մութ աշխարհ է»:

Երեք տարի առաջվա լավատեսական տրամադրությունը, երբ ժողովրդական շարժումը հաղթեց, չկա: «Երկիրը մեկ այլ երկիր է դարձել»:

«ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆԵՆՔ ՄԵՐ ՄԵՂՔԸ ԵՎ ԿՐԿԻՆ ՈՒՂՂՎԵՆՔ ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ: ԴԱ ԱՅՆ Է, ԻՆՉՈՐ ՊԵՏՔ Է ԲՈՒԺԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ»:

Պատմական զուգահեռներ

Դա այդպես է համարում նաև Անդրեաս Բաումանը: Նա ղեկավարում է «Արևելքում քրիստոնեական օգնության միություն»-ը, որը տեղում աջակցում է իր գործընկերների տարբեր նախագծերին, այդ թվում՝Ջամբազյանի «Diaconia»-ին: Նա նշում է, որ շատ հայեր հիասթափված են, որ Գերմանիան ավելի պարզ չի խոսել այս պատերազմում ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի դերի մասին: Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն Ադրբեջանին օժանդակում էր ժամանակակից զենքերով և կործանիչ ինքնաթիռներով, բացի դրանից՝Թուրքիան պատերազմի համար վարձկաններ էր զորակոչում Սիրիայից: Հայաստանը նկատմամբ հաղթանակի ռազմական շքերթում Էրդողանը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի պատվավոր հյուրն էր:

Պատերազմի սկզբից երկու շաբաթ անց «Օգնության միությունը» կարծիք ուղարկեց Գերմանիայի Բունդեսթագի պատգամավորներին: Դրանում ասվում էր, որ Էրդողանը թեժացնում է հակամարտությունը: Դա անընդունելի է և պետք է «հստակ և խիստ» դատապարտվի գերմանական քաղաքականության կողմից: Բացի դրանից՝ «Օգնության միություն»-ը պատգամավորներին հիշեցնում էր «Գերմանիայի այն ժամանակվա դաշնակից Թուրք-Օսմանյան կայսրության 1915 թ. Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի համապատասխանատվությունը»: 2016 թ. Բունդեսթագը ընդունել էր բանաձև, որով ճանաչում է այդ համապատասխանատվությունը և պատահածը որակում է ցեղասպանություն: Կանցլեր Անգելա Մերկելը, Զիգմար Գաբրիելը և այն ժամանակ փոխկանցլեր և արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը բացակայում էին քվեարկությունից: Այդ կապակցությամբ դաշնային կառավարությունն ընդգծեց, որ բանաձևն իրավաբանորեն պարտադիր չէ: «Օգնության միության» կառավարիչ Բաումանը մինչ օրս համարում է տհաճ ազդանշան, չնայած նա գիտակցում է քաղաքական շահերը (լոգունգ՝ փախստականների գործարք):

Նրա հայացքներում պատմական զուգահեռները, այնուամենայնիվ, աչք ծակող են: Ի վերջո, նրա կազմակերպությունն ուղղակիորեն կապված է Օսմանյան կայսրությունում հայերի ճակատագրի հետ. 1896 թ. Էռնստ Լոհմանը՝ այդ ժամանակ ավետարանական քահանա Մայնի Ֆրանկֆուրտում, ամերիկյան “Christian Herald” շաբաթաթերթում կարդում է տասնյակ հազարավոր քրիստոնյա հայերի կոտորածների մասին: Նա զարմացած է, որ դրա մասին դեռ ոչինչ չի լսել հայրենական մամուլից: Բայց կայսրությունը շահագրգռված չէ հասարակության հանդեպ այս թեմայով, քանի որ դաշնակցում է սուլթանի հետ: Մամուլը, այսպես է կարծում Լոհմանը, շատ փող է ստացել Ստամբուլից լռության համար: Լոհմանը, որին առանձնապես հոգս են պատճառում աղքատ և սոցիալապես անապահով մարդիկ, որոշում է անձամբ հարցն իր ձեռքը վերցնել: 1896 թ. փետրվարին նա հրապարակում է մի թռուցիկ և տեղեկացնում հետապնդումների ալիքի մասին: «Անըմբռնելի է, անտանելի է, որ քրիստոնեությունը անտարբեր և անզոր դեռ նայում է այսպիսի զարհուրելի ողբերգությանը», - գրում է նա:

Ավետարանական միությունում և Գնադաույի միաբանական շարժման (որը նա համատեղ էր կյանքի կոչել) նրա կապերի միջոցով թռուցիկն արագորեն տարածվում է և առաջացնում անսպասելի արձագանքներ. նույն ամսին նա ստանում է 14.000 մարկ՝ սովամահության սպառնալիքի տակ գտնվող հայերին փրկելու համար: Մինչև օգոստոս հավաքվում է ավելի քան 47.000 մարկի նվիրատվություն: Լոհմանը գումարը փոխանցում է Օսմանյան կայսրությունում ամերիկացի միսիոներներին, որոնք նրա հանձնարարությամբ պաշտպանության տակ են առնում 100 որբերի: Քահանա Յոհաննես Լեփսիուսի հետ միասին, որն այժմ գործում է, նմանապես «Գերմանիայի Արևելյան առաքելության» հետ հայերին օգնություն կազմակերպելու համար այդ տարվա հուլիսին նա հիմնադրում է «Հայաստանի օգնության գերմանական միություն»-ը՝ երկու կայաններով՝ մի կոմիտե Ֆրանկֆուրտում՝ Լոհմանի ղեկավարությամբ, և մեկը, Լեփսիուսի պատասխանատվությամբ, Բեռլինում: Այն ղեկավարում է Ավետարանական միության այն ժամանակվա նախագահ, կոմս Անդրեաս ֆոն Բերնստորֆի կողմից: Առաջ են գալիս նաև տարածաշրջանային այլ կոմիտեներ, օրինակ՝ Էլզասում և Շվեյցարիայում: 1896 թ. վերջին օգնության միությունն Արևելք է ուղարկում իր առաջին աշխատակիցներին: Ամենից առաջ շեշտը դրվում է մանկատների վրա, որոնցում քսան տարի անց՝ ցեղասպանության ժամանակ, հազարավոր երեխաներ ապահով են: Հետագա տարիներին ավելացան դպրոցներ, հիվանդանոցներ և արհեստավորներ պատրաստող արհեստանոցներ: Հիմնադրվում են նաև իգական աստվածաշնչային դպրոց և ավետարանիչների ուսումնական կենտրոն:

Աստծո որոնում

Բաումանը բացատրում է, որ Լոհմանի խնդիրը ոչ միայն կարիքավոր մարդկանց խնամքն էր, այլ նաև՝ նրանց հոգևոր բարօրությունը: Սա Լոհմանի՝ որպես Գերմանիայի քահանայի համար նույնքան կարևոր էր, որքան՝ որպես օգնության կազմակերպության ղեկավարի: Առաջին համաշխարհային պատերազմից և ցեղասպանությունից քիչ առաջ հայերի մեջ նա ճանաչեց իսկական զարթոնքի շարժումը: «Արևելքում Ավետարանի լույս լինել, դրանում էր Լոհմանը տեսնում հայ ժողովրդի կոչումը»: Այսօր «Օգնության միություն»-ում աշխատում են միայն հինգ աշխատակիցներ: Գործնական և ֆինանսական օգնությունից բացի՝ այն կենտրոնացած է ծրագրի երկրներում համայնքների հետ կապեր պահպանելու, նրանց հուզող հարցերին մասնակցելու, նրանց համար աղոթելու և Գերմանիայում նրանց մասին տեղեկացնելու վրա:

Միության անցած 125 տարիների աշխատանքը կերտում է տարածաշրջանում նրա հեղինակությունը մինչ օրս: Մանկատներում մեծացած մարդկանց հետնորդներն այժմ համատեղ աշխատում են տեղական նախագծերի վրա: «Այս վստահությունն ու այս միասնությունը մեր ֆունտն են», - ասում է Բաումանը: Նա առաջվա պես

կազմակերպությունն առաջին հերթին համարում է Միջին Արևելքի քրիստոնյաների օգնության գործ, բայց՝ հոգևոր հայացքով առաջնորդվող, որտեղ անհրաժեշտ են կոնկրետ նախագծեր և, թե ինչպես կարող են դրանց միջոցով հասնել մարդկանց սրտերին: «Լոհմանը էապես ազդված էր այն բանից, ինչը տեղի է ունենում իր հավատակից եղբայրների ու քույրերի հետ, և հետո նա գործել է պրագմատիկ և ճկուն», - ասում է Բաումանը. դիրք, որը նա ցանկանում է պահպանել:

Վերջին պատերազմից հետո Հայաստանը կրկին գտնվում է այն ցուցակի վերևում, որտեղ օգնություն է անհրաժեշտ՝ ոչ միայն մարդասիրական օժանդակության առումով: Ծրագրի գործընկեր Ջամբազյանն ասում է. «Կա աստվածաշնչային մի սկզբունք. եթե դու ուղղվում ես դեպի Աստված, նա կգտնվի: Սա վերաբերում է նաև մեր ժողովրդին: Մենք պետք է խոստովանենք մեր մեղքը և կրկին ուղղվենք դեպի Աստված: Դա այն է, ինչը պետք է բուժի մեր ժողովրդին: Մենք աղոթում ենք դրա համար»: Այդ պատճառով նա իր կազմակերպության ապագա խնդիրն է համարում նաև ուժեղացնել քրիստոնեական համայնքները. որ դրանք վկայում են Հիսուսի մասին և լույս են խավարի մեջ՝ հենց հիմա:

Լեռնային Ղարաբաղը կամ «Արցախ»-ը ինքնավար, միջազգայնորեն չճանաչված հանրապետություն է Ադրբեջանի կազմում, որում ապրում է շուրջ 150.000 մարդ՝ գրեթե բացառապես հայեր: 1990-ական թթ. սկզբի մի պատերազմում տասնյակ հազարավոր զոհերի հետ Ադրբեջանը կորցրեց վերահսկողությունը տարածքի նկատմամբ: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը վերահսկում է նաև հարևան երկրի տարածքը՝ իր և Լեռնային Ղարաբաղի միջև: Այդ ժամանակվանից Հայաստանի և Ադրբեջանի միջև կա մշտական լարվածություն: 2020 թ. սեպտեմբերի վերջին տեղի ունեցավ Ադրբեջանի հարձակումը հարևանի վրա: Երկու կողմերն էլ մեղադրվում են, որ կատարել են պատերազմական հանցագործություններ: Թուրքիայի աջակցությամբ՝ Ադրբեջանը հետ գրավեց հատվածներ Լեռնային Ղարաբաղից և գրավյալ տարածքները: Ռուսաստանը միջնորդեց հրադադարը, որն ուժի մեջ է նոյեմբերի 10-ից: Բացի այդ՝ Հայաստանը ստիպված էր վերադարձնել պահվող մյուս տարածքները: Ռուսական խաղաղապահ զորքերը հետևում են հրադադարի պահպանմանը: Դաշնային կառավարությունը ենթադրում է առնվազն 90.000 հայ փախստական Լեռնային Ղարաբաղից և 50.000 ադրբեջանցի փախստական: Ոմանք վերադարձել են: Պատերազմն ավելի քան 4600 կյանք խլեց:

Աղբյուր՝ pro|Christliches Medienmagazin, 2, 2021, S. 34-36.